ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/273

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.10.2021թ. թիվ 26/26-1/17247-2021 գրությամբ «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 14.10.2021թ. թիվ 3/27/68725-21 գրության հիման վրա, 21.10.2021թ. թիվ 26/26-1/17247-2021 գրությամբ նախաձեռնել է «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Արմինժ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արմինժ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Արմինժ գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/273 ընթացակարգի շրջանակներում 27.10.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.10.2021թ. թիվ 3/27/68725-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն, Ձեզ է ուղարկվում «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37» ծածկագրով «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի կատարմանը վերաբերող փաստաթղթերը՝ «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/273 ընթացակարգի շրջանակներում 27.10.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ՆԳ-2021/273 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/273 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության և «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ի միջև 16.06.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37» ծածկագրով պետության կարիքների համար աշխատանքի կատարման պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սերվերային սենյակի վերանորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, պայմանագրով նախատեսված աշխատաքների կատարման ժամկետ է սահմանվել Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օր հետո, 40 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան սույն թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 09.07.2021թ. կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, համաձայն որի հատկացվել են ֆինանսական միջոցներ:

4. ՀՀ ոստիկանության ՏՎ շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի պետ, ոստիկանության կապիտան Ա. Հովհաննիսյանի կողմից ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանին և տնտեսական վարչության պետ Ա. Ներսիսյանին 07.10.2021թ. ներկայացվել է զեկուցագիր հետևյալ բովանդակությամբ.

«ՀՀ ոստիկանության և «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ի միջև 16.06.2021թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37 ծածկագրով գնման պայմանագիր, որի շրջանակներում «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ստանձվել է իրականացնելու ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ոստիկանության բաժնում փորձագիտական լաբորատորիայի ընթացիկ նորոգման աշխատանքները, համաձայն օրացուցային գրաֆիկի աշխատանքների կատարման համար սահմանվել է 40 օր, համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, որը ուժի մեջ է մտել 09.07.2021թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37 ծածկագրով թիվ 1 համաձայնագրով:

Մեր կողմից՝ 22.09.2021թ. թիվ 27/1212 գրությունով նախազգուշացվել է աշխատանքները սահմանված ժամկետում ավարտին հասցնելու համար, սակայն աշխատանքները ավարտին հասցնելու համար միջոցներ չեն ձեռնարկվել մինչ օրս: Միաժամանակ հայտնում եմ, որ «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ն 02.09.2021թ. գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանություն՝ պայմանագրի 7.8 կետի համաձայն ժամկետը երկարացնել 30 օրով, սակայն «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ն 02.09.2021թ. գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանություն՝

պայմանագրի 7.8 կետի համաձայն ժամկետը երկարացնել 30 օրով, սակայն «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի կանոնները:

Զեկուցելով վերոգրյալի մասին, խնդրում եմ Ձեր համաձայնությունը և հանձնարարականը պայմանագրի 5-րդ կետով սահմանված կողմերի պատասխանատվությունից բխող դրույթների կիրառմամբ՝ պայմանագիրը միակողմանի լուծել՝ կիրառելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթները»:

5. Պատվիրատուն «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 12.10.2021թ. թիվ 27/1351 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «Արմինժ գրուպ» ՍՊԸ -ի միջև 16 հունիսի 2021թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37 ծածկագրով փորձագիտական լաբորատորիայի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռք բերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել, մասնավորապես՝ սահմանված ժամկետում չի ներկայացրել ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37 ծանկագրով պայմանագրի համաձայնագիր 2-ը, որով սահմանվելու էր «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ի կողմից կատարվող աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում 30 աշխատանքային օրով, ինչպես նաև սահմանված ժամկետում չի կատարել 3 463 295 /երեք միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր իննսունհինգ / ՀՀ դրամի աշխատանքները:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե աշխատանքի կատարման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.11-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Արմինժ գրուպ» ՍՊԸ -ի միջև 16.06.2021թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ- ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Արմինժ գրուպ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով, կներկայացվի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները՝ 3 463 295 /երեք միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամ և 346 329 / երեք հարյուր քառասունվեց հազար երեք հարյուր քսանինը/ ՀՀ դրամ գումար գանձելու նպատակով, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 90000000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 12.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.10.2021թ. թիվ 26/26-1/17247-2021 գրությունը, ՀՀ ոստիկանության 14.10.2021թ. թիվ 3/27/68725-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և

ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ ոստիկանության և «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ի միջև 16.06.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37» ծածկագրով պետության կարիքների համար աշխատանքի կատարման պետական գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սերվերային սենյակի վերանորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, պայմանագրով նախատեսված աշխատաքների կատարման ժամկետ է սահմանվել Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օր հետո, 40 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան սույն թվականի դեկտեմբերի 20-ը:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 09.07.2021թ. կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, համաձայն որի հատկացվել են ֆինանսական միջոցներ:

ՀՀ ոստիկանության ՏՎ շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի պետ, ոստիկանության կապիտան Ա. Հովհաննիսյանի կողմից ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանին և տնտեսական վարչության պետ Ա. Ներսիսյանին 07.10.2021թ. ներկայացվել է զեկուցագիր հետևյալ բովանդակությամբ.

«ՀՀ ոստիկանության և «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ի միջև 16.06.2021թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37 ծածկագրով գնման պայմանագիր, որի շրջանակներում «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ստանձվել է իրականացնելու ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի ոստիկանության բաժնում փորձագիտական լաբորատորիայի ընթացիկ նորոգման աշխատանքները, համաձայն օրացուցային գրաֆիկի աշխատանքների կատարման համար սահմանվել է 40 օր, համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, որը ուժի մեջ է մտել 09.07.2021թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37 ծածկագրով թիվ 1 համաձայնագրով:

Մեր կողմից՝ 22.09.2021թ. թիվ 27/1212 գրությունով նախազգուշացվել է աշխատանքները սահմանված ժամկետում ավարտին հասցնելու համար, սակայն աշխատանքները ավարտին հասցնելու համար միջոցներ չեն ձեռնարկվել մինչ օրս: Միաժամանակ հայտնում եմ, որ «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ն 02.09.2021թ. գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանություն՝ պայմանագրի 7.8 կետի համաձայն ժամկետը երկարացնել 30 օրով, սակայն «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ն 02.09.2021թ. գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանություն՝ պայմանագրի 7.8 կետի համաձայն ժամկետը երկարացնել 30 օրով, սակայն «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի կանոնները:

Զեկուցելով վերոգրյալի մասին, խնդրում եմ Ձեր համաձայնությունը և հանձնարարականը պայմանագրի 5-րդ կետով սահմանված կողմերի

պատասխանատվությունից բխող դրույթների կիրառմամբ՝ պայմանագիրը միակողմանի լուծել՝ կիրառելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթները»:

Պատվիրատուն «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 12.10.2021թ. թիվ 27/1351 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «Արմինժ գրուպ» ՍՊԸ -ի միջև 16 հունիսի 2021թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37 ծածկագրով փորձագիտական լաբորատորիայի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռք բերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել, մասնավորապես՝ սահմանված ժամկետում չի ներկայացրել ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37 ծանկագրով պայմանագրի համաձայնագիր 2-ը, որով սահմանվելու էր «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ի կողմից կատարվող աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում 30 աշխատանքային օրով, ինչպես նաև սահմանված ժամկետում չի կատարել 3 463 295 /երեք միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր իննսունհինգ / ՀՀ դրամի աշխատանքները:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե աշխատանքի կատարման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.11-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Արմինժ գրուպ» ՍՊԸ -ի միջև 16.06.2021թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ- ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Արմինժ գրուպ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով, կներկայացվի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները՝ 3 463 295 /երեք միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամ և 346 329 / երեք հարյուր քառասունվեց հազար երեք հարյուր քսանինը/ ՀՀ դրամ գումար գանձելու նպատակով, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 90000000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 12.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

<u>2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝</u>

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի 5.6-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ ոստիկանության միջև 16.06.2021թ. կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.10.2021թ. թիվ 26/26-1/17247-2021 գրությամբ «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արմինժ գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**